Հայտարարություն

Հայտարարվում է ուսուցչի թափուր տեղի մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Վարդենիսի համար 3 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի հետևյալ առարկաների համար <<ֆրանսերեն>>՝ 15 դասաժամ, <<Կերպարվեստ>>՝ 5 դասաժամ:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի : Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարի:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

--դիմում՝/Ձև1/, մեկ լուսանկար 3x4 չափի

--բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,

-Անձը հաստատող փաստաթուղթ

-- <<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

-Ինքնակենսագրություն(Ձև5)

-այլ պետությունների քաղաքացիները՝ Հայստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ:

-- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

-- հրատարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ(առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթի բնօրինակները համեմատում է պատճենների հետ ու բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերի պատճենները պատք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ օգոստոս 31-ից մինչև սեպտեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-15:00 , բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթները տեղի կունենան 2026թ սեպտեմբերի 25 –ին ժամը 14:00-ին,Գեղարքունիքի մարզի Վարդենիսի թիվ 3 հիմնական դպրոցում:

Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Խ. Ստեփանյան 15:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 077838246 հեռախոսահամարով: